ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. հուլիսի 12 թիվ 67 -Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալի 2011թվականի հուլիսի 6-ի թիվ 2/3/1-695 գրությունը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Դավթաշեն, Թլիկ, Աշնակ, Կաթնաղբյուր և Եղնիկ համայնքներում առկա անասնագլխաքանակի (մանր, խոշոր և այլն) վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ հուլիսի 14-ից 20-ը կատարել ուսումնասիրություն և արդյունքների մասին զեկուցել մարզպետին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ. հուլիսի 12-ի թիվ 67 -Ա կարգադրության

ԿԱԶՄ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Սասուն Ադամյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Աշտարակի ՍԾՏԳ-ի պետ, հանձնաժողովի նախագահ

Գայանե Տոնոյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Աշտարակի ՍԾՏԳ-ի գլխավոր մասնագետ

Արփիկ Պապյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Աշտարակի ՍԾՏԳ-ի առաջատար մասնագետ

Լևոն Գրիգորյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ